Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Քաղաքացիական ծառայողների անունը, ազգանունը.

Մարիանա Սարգսյան

Արփինե Առաքելյան

2. Զբաղեցրած պաշտոնները.

ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժնի ավագ մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Մոլդովայի Հանրապետություն, ք. Քիշնև, 22-25 մայիսի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Մասնակցություն Արևելյան գործընկերության (ԱլԳ) հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի 5-րդ հանդիպմանը

6. Քննարկված թեմաները.

- Հետազոտությունների և նորարարության ոլորտներում ԱլԳ շրջանակում միջազգային համագործակցության զարգացման հեռանկարները,
- ԱլԳ երկրների մասնակցությունը ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին,
- ԱլԳ հետազոտությունների և նորարարության առաջնահերթությունները և անդամ երկրներում իրականացվող միջոցառումները, բարեփոխումները և մարտահրավերները,
- Եվրոպական հետազոտական տարածքում միջազգային համագործակցության արժեքները և սկզբունքները,
- ընթացիկ այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Մ. Սարգսյանը ներկայացրել է ՀՀ գիտության ոլորտի միջազգայնացմանն ուղղված ծրագրերը, իրականացվող այն դրամաշնորհային ծրագրերը, որոնք բաց են նաև ԱլԳ անդամ երկրների հետազոտողների համար, ինչպես նաև տեղեկատվություն է տրամադրել

Եվրոպական հետազոտական տարածքի երեք գերակա ուղղությունների (Հետազոտական կարիերա, Հետազոտությունների գնահատում և Հետազոտական ենթակառուցվածքներ) գծով իրականացվող միջոցառումների ընթացքի վերաբերյալ:

Ա.Առաքելյանը ծանոթացել է ԱլԳ անդամ երկրներում իրականացվող բարեփոխումների և Եվրոպական հետազոտական տարածքում միջազգային համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրերին:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ շարունակելու աշխատանքային շփումները և պարբերաբար իրազեկելու իրականացվող ծրագրերի ընթացքի մասին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի մասնակցության ակտիվացմանն ուղղված ծրագրերը քննարկել 2023 թվականի դեկտեմբերին Երևանում կայանալիք Հետազոտությունների և նորարարության հարցերով ԵՄ – Հայաստան համատեղ կոմիտեի երկրորդ հանդիպման ընթացքում:

Որոշվել է ԱլԳ հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի 6-րդ հանդիպումն անցկացնել 2024 թվականի գարնանը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղման շրջանակում Մոլդովայի հետազոտությունների և մշակումների ազգային գործակալության ներկայացուցչի հետ քննարկվել է երկկողմ համագործակցության հնարավորության հարցը: Կողմերը պայմանավորվել են աշխատանքային կարգով շարունակել քննարկումները մոլդովական կողմից փոխանցված համաձայնագրի նախագծի դրույթների շուրջ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Ռումինիայի Հետազոտությունների և նորարարությունների նախարարության ներկայացուցչի հետ՝ սկսելու քննարկումներ երկկողմ համագործակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Մարիանա Սարգսյան

Արփինե Առաքելյան

29.05.2023 թ.